

7-35

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԴԵՄՈՅԱՆ

ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ  
20-ՐԴ ԴԱՐԻ 80-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00.02 - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»  
մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂԱՍԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2001

Ստեփանյան  
Ստեփանյան  
25.10.2001

Ատենախոսության ժամանակ հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝  
Կատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝ Բ. Հ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
Կատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝ Վ. Ա. Բայբուրդյան


Կատմական գիտությունների թեկնածու  
դոցենտ՝ Վ. Գ. Ալեյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է՝ 2001թ. նոյեմբերի 26-ին, ժ. 14-ին ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝  
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2001թ. հոկտեմբերի 25-ին

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  Ս. Կ. Բաղդասարյան

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից Թուրքիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման  
պատմության հարցերը, տնտեսական համակարգի և սոցիալ-տնտեսական գործընթացների  
ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական ու գործնական  
նշանակություն:

XX դարի 80-90-ական թթ. Թուրքիայում տեղ գտած տնտեսական համակարգի  
ազատականացման քաղաքականությունը զգալիորեն փոխեց երկրի սոցիալ-տնտեսական և  
քաղաքական պատկերը, ազդարարելով միաժամանակ քեմալական սկզբունքների ու  
գաղափարախոսության մասնակի վերանայումը և պատմական նոր ժամանակաշրջանի  
սկիզբը: Այս գործընթացներն զգալի ազդեցություն բողեցին երկրի սոցիալ-տնտեսական  
հետագա զարգացման, բուրքական ազգի ինքնության և ինքնագիտակցության  
վերաթեքավորման գործընթացի վրա: Այդ առումով կողմնորոշիչ դեր կարող է կատարել  
բուրքական տնտեսության ոլորտում մասնավոր ձեռնարկատիրության ամրապնդման, սոցիալ-  
տնտեսական վերափոխման գործընթացներում բանակի ունեցած դերի և նշանակության,  
բուրքական սահմանադրությունների մեջ տնտեսության կարգավորման հարցերին  
անդրադառնող հոդվածների, քեմալական և ազատական գաղափարախոսությունների  
փոխգործակցության, ինչպես նաև արտաքին առևտրի ոլորտում նոր առևտրատնտեսական  
հարաբերությունների հաստատման և սոցիալ-տնտեսական ու քաղաքական  
արդիականացման հարցերի ուսումնասիրությունը:

Թուրքիայում 80-ական թթ. արմատական սոցիալ-տնտեսական միջոցառումները  
լինելով դրսից ներմուծված և պարտադրված սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգ,  
առաջին փուլում իրագործվեցին զինվորական իշխանության կոշտ քաղաքականության  
պայմաններում: Այդ իսկ պատճառով մինչ օրս բուրքական տնտեսության ազատականացման  
ռազմավարության արդյունքների գնահատականը հանդիսանում է իրարայն զիտական  
բանավեճերի առարկա: Սակայն ակնհայտ է, որ դրանք իսլամադավան աշխարհիկ  
հասարակության պայմաններում արևմտյան հասարակական-քաղաքական և տնտեսական  
համակարգին և քաղաքակրթությանը բնորոշ արժեքների ներդրման եզակի օրինակներից է:  
Մեզանում հանրապետական Թուրքիայի պատմության այս փուլի և այն պայմանավորող

գործընթացների հանդեպ եղած հետաքրքրությունը պայմանավորված է նորանկախ ազգային պետության տնտեսական ռազմավարությանն առնչվող հարցերով, ինչպես նաև արտաքին քաղաքականության ասպարեզում նոր մոտեցումներ կիրառելու պահանջով:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է, ելնելով Թուրքիայի 80-90-ական թթ. սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերում տեղի ունեցած տեղաշարժերի առանձնահատկությունների հետազոտման և դրանց ամբողջական բնութագրման նպատակից, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել Թուրքիայի 1980-90-ական թթ. սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ գոյություն ունեցող նյութերի և աղբյուրների վերլուծության հիման վրա ժամանակակից Թուրքիայի հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգը, տնտեսության զարգացման շուրջ քաղաքական կուսակցությունների մոտեցումները և դրանց դերը, թուրքական տնտեսական համակարգում շուկայական հարաբերությունների մեխանիզմի ներդրման առանձնահատկությունները, եղանակներն ու մեթոդները,
2. լուսաբանել Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր փուլերին հատուկ տնտեսական քաղաքականության առանձնահատկություններն ու ընդհանրությունները,
3. քննարկել Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում բանակի, որպես հասարակական-քաղաքական ազդեցիկ հաստատության ունեցած վճռորոշ դերը,
4. հետազոտել օգայյան բարեփոխումների ընթացքը, գրանցված դրական արդյունքներն ու բացթողումները,
5. ուսումնասիրել իրականացված տնտեսական վերափոխումների հետևանքով Թուրքիայի արտաքին տնտեսական կապերի ընդլայնման ընթացքը, որպես արտաքին քաղաքական շահերի ընդարձակման և ամրապնդման կարևոր գործոն:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման հայ պատմագիտության մեջ չի հանդիսացել առանձին ուսումնասիրության առարկա: Իհարկե, առանձին հայ թուրքագետներ անդրադարձել են նախապատերազմյան և ետպատերազմյան շրջանի Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման պատմության հարցերին, սակայն Թուրքիայի 20-րդ դարի 80-90-ական

թվականների սոցիալ-տնտեսական զարգացման և քաղաքական կյանքի պատմության հարցերը հատուկ քննության չեն ենթարկվել: Խորհրդային շրջանում մի քանի հետազոտողներ մասնակիորեն կամ առանձին կտրվածքներով անդրադարձել են ատենախոսության թեմային առնչվող մի շարք խնդիրների, սակայն մինչ 90-ականները հրատարակված գիտական գրականությունն ակնհայտորեն կրում է խորհրդային համայնավարական գաղափարախոսության և կոնյուկտուրայի կնիքը: Այդուհանդերձ ատենախոսը քննադատաբար մոտենալով խորհրդային հեղինակների աշխատանքներին, դրանք մեծապես օգտագործվել է աշխատանքի շարադրման ընթացքում:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է աշխատանքի բովանդակության, հարցադրումների և հետազոտման կտրվածքի մեջ: Ատենախոսը փորձել է համակողմանի վերլուծության ենթարկել 1980 թվականի սեպտեմբերի 12-ից հետո Թուրքիայում իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումները, դրանց իրագործման ընթացքը և առանձնահատկությունները, դիտարկելով դրանց գնահատման շուրջ առկա տարածայնություններն ու տեսակետները: Աշխատանքում համակողմանիորեն վերլուծության են ենթարկվում նոր տնտեսական քաղաքականության սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, դրանք պայմանավորող գործոնները, ինչպես նաև համադրվում են այդ քաղաքականության արդյունքների շուրջ եղած տեսակետներն ու կարևոր եզրակացությունները:

Ատենախոսը հատուկ ուշադրություն է դարձրել շուկայական հարաբերությունների մեխանիզմի, արևմտամեթոդական արժեքների ու չափանիշերի և թուրքական հասարակական զարգացման պատմության փոխահարաբերության և տարբերակման առանձնահատկություններին:

Ատենախոսության մեջ հանգամանալիորեն ուսումնասիրվում են նոր տնտեսական ռազմավարության շուրջ թուրքական հասարակական-քաղաքական շրջանների վերաբերմունքը և գնահատականը, թուրքական պետության ազդեցիկ դերը երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական ոլորտներում, քննության է ենթարկվում թուրքական բանակի որպես պետական կարևոր ու ազդեցիկ ինստիտուտի գործադրած տնտեսական քաղաքականության որակական առանձնահատկությունները: Հեղինակը հատկապես քննության է ենթարկել բանակի ունեցած առանձնահատուկ և որոշիչ դերը, ոչ միայն ներքաղաքական լարվածությունը թուլացնելու և ահաբեկչության ալիքը մեղմելու առումով, այլև դրա տնտեսական բարեփոխումների առաջին փուլի իրականացման և դրանց համեմատաբար դրական արդյունքների ապահովման տեսակետից: Լուսաբանվում են նաև քաղաքական կոնյուկտուրայի և տնտեսական քաղաքականության փոխահարաբերության որոշ

խնդիրներն ու առանձնահատկությունները, որոնց շուրջ գիտական գրականության մեջ առկա են իրարանցիկ գնահատականներ: Հեղինակն իր առջև խնդիր է դրել ոչ միայն համադրել այդ գնահատականները, այլև սեփական հետազոտության միջոցով արժեքավորել թուրքական իշխանությունների տնտեսական բարեփոխումների քաղաքականությունը:

Աշխատանքի գիտական նորություններից է նաև տնտեսական քաղաքականության, որպես արտաքին քաղաքականության վրա ներազդող կարևորագույն գործոններից մեկի քննությունը՝ որն ատենախոսը կատարում է, ելնելով Թուրքիայի 80-90-ական թթ. արտաքին տնտեսական կապերի հաստատման տրամաբանությունից: Փորձել է արվել պատմագիտական ուսումնասիրության շրջանակներում ներկայացնել նաև որոշ տնտեսագիտական մոտեցումներ, որոնց անհրաժեշտությունը բխում էր հետազոտության նյութից:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունը հիմնականում ընդգրկում է 1980-1995թթ. սակայն, ելնելով քննության առաջադրած խնդիրներից, հեղինակը երբեմն ծավալում անդրադարձներ է կատարել 50-70-ական թթ. ժամանակահատվածին: Այսպիսի պարբերացման ընտրությունը պայմանավորված է եղել մինչօգլայան բարեփոխումները Թուրքիայում տիրող հասարակական-քաղաքական և տնտեսական իրավիճակի քննության անհրաժեշտությամբ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, բուրբերեն ու մի քանի այլ լեզուներով աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Աշխատանքը շարադրելու ընթացքում ատենախոսն էապես հենվել է թե խորհրդային և թե արևմտյան հեղինակների բազմաբնույթ աշխատությունների վրա, քննության հիմքում դնելով ինչպես պաշտոնական ու վիճակագրական հրատարակումները, այնպես էլ պարբերականները:

Յավոր, հեղինակը միշտ չէ որ հնարավորություն է ունեցել լայնորեն օգտագործելու ընդգրկված ժամանակահատվածին վերաբերվող թուրքալեզու աղբյուրները և ուսումնասիրությունները, հանգամանք, որը պայմանավորված է հայ-թուրքական հարաբերություններում ամկա լարվածությամբ ու գիտական շփումների բացակայությամբ: Եթե անգամ հայ-թուրքական հարաբերություններում լարվածություն էլ չլիներ,

այնուամենայնիվ անհրաժեշտ արխիվային նյութը մատչելի կդառնար միայն դարիս 10-20-ական թթ.:

Վիճակագրական նյութերի ուսումնասիրության և դրանց շրջանառության մեջ դնելու առումով օգտակար էին Թուրքիայում լույս տեսած վիճակագրական նյութեր պարունակող մի շարք պաշտոնական հրատարակումները, ինչպես նաև խորհրդային շրջանում հրատարակված «Թուրքիայի հանրապետություն» վերնագրով ժողովածուները:<sup>1</sup>

Աշխատանքը շարադրելիս հեղինակին մեծապես օգնել են խորհրդային և ռուս թուրքագետների, արևելագետների, տնտեսագետների ու պատմաբանների՝ մեծաթիվ տարաբնույթ ուսումնասիրությունները: Հիշատակության արժանի են Ն. Կիրեևի,<sup>2</sup> Ի. Ալիբեկովի, Դ. Վոլովիչենկոյի, Մ. Հասարթյանի, Վ. Դամիլովի, Ն. Կոմախիձեի, Պ. Սոխսեևի, Յու. Առգալիևի, Գ. Ստարչենկովի, Ե. Ուրազովայի հոդվածներն ու մեծագրությունները:<sup>2</sup>

<sup>1</sup> Dördüncü beş yıllık kalkınma planı (1979 - 1983), Ankara, 1979, Turkey: An Economic Survey, April, Istanbul, 1977, Turkey: An Official Handbook, Ankara, 1990, Турецкая республика (справочник), М., 1975, 1990.

<sup>2</sup> Киреев Н. Г., История этатизма, М., 1991, Киреев Н. Г., Проблемы социально-экономического развития Турции в турецких концепциях "исламской экономики", в кн. "Ислам в странах Ближнего и Среднего Востока", М., 1982, Киреев Н. Г., Развитие капитализма в Турции. К критике "смешанной экономики", М., 1982, Алибеков И. В., Государственный капитализм в Турции, М., 1966, Алибеков И. В., Государственный сектор в промышленности Турции (становление и основные тенденции развития), в кн. "Вопросы экономического развития Ирана и Турции", Баку, 1978, Вдовиченко Д. И., Тургут Озал, "Вопросы истории" 1994, No. 4, Вдовиченко Д. И., Борьба политических партий в Турции, 1944-1965 гг., М., 1967, Չարթթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Տ., Պետրոսյան Յու. Ա., Թուրքիայի պատմության արվագներ, Երևան, 1986, Гасратян М. А., Турция в 1960-1963гг., М., 1965, Гасратян М. Моисеев П., Турция ждет перемен, М., 1963, Данилов В. И.; Средние слои в политической жизни современной Турции, М., 1968, Данилов В. И., Политическая борьба в Турции, М., 1985, Данилов В. И., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", М., 1991, Комахидзе Н. В., Проблема преодоления социально-экономической отсталости востока Турции в программных установках буржуазных партий страны, Тбилиси, 1985, Моисеев П. П., Аграрный строй современной Турции, М. 1970, Моисеев П. П. Старченков Г. И., Стратегии экономического развития Турции (20-80-е годы XX в.), "Народы Азии и Африки", 1987, No. 2, Моисеев П. П., Тенденции развития экономической мысли в Турецкой республике, "Народы Азии и Африки", М., 1983, No. 1, Моисеев П. П., Экономическая политика военного режима в Турции (сентябрь 1980г. - декабрь 1983г.), "Зарубежный мир: социально-политические и экономические проблемы", Выпуск 10, Киев, 1987, Розалиев Ю. Н., Особенности развития капитализма в Турции, М., 1962, Розалиев Ю. Н., Экономическая история Турецкой республики, М., 1980, Розалиев Ю. Н., Крупная буржуазия современной Турции, "Народы Азии и Африки", 1983, Старченков Г., Турция на новом этапе социально-экономического развития, "Мировая экономика и международные отношения", 1989, No. 10, Старченков Г. И., Население Турецкой республики. Демографо-экономический очерк, М., 1990, Уразова Е. И., Турция: проблемы финансирования экономического развития, М., 1974, Уразова Е. И., Экономика Турции: от этатизма к рынку (внутренние и внешние источники экономического роста), М., 1993.

Հաշվի առնելով նշված աշխատությունների մի զգալի մասի կոնյուկտուրային բնույթը և քաղաքական ենթատեքստը, ատենախոսը քննադատաբար է օգտվել դրանցից: Սոցիալ-տնտեսական բնույթի հարցերը խորհրդային շրջանի պատմագիտական գրականության մեջ որպես կանոն դիտարկվել են կուսակցական գաղափարախոսության և մարքսիստական փիլիսոփայության դիրքերից, քննադատության ենթարկելով կապիտալիստական հասարակարգը, մասնավորապես խիստ բացասական գնահատական տալով շուկայական հարաբերություններին ու տնտեսակարգին: Պատահական չէ, որ հիշյալ հեղինակների մի մասն իրենց վերջին հրապարակումներում վերանայել է նախկինում առաջ քաշված կարծիքներն ու տեսակետները:

Թուրք հեղինակների աշխատանքները, որոնք, ինչպես վերը նշեցինք, նշանակալից չափով անմատչելի էին, ատենախոսը մի շարք դեպքերում օգտագործել է ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն քարգմանություններով: Թուրք հեղինակների գործերը ներկայացված են Հալուկ Ջիլովի, Դոդան Ավջըրլու և Չալլար Քեյդերի աշխատություններով, որոնցում հեղինակների առաջադրած գնահատականներն ու տեսակետները շատ հաճախ հակադրվում են թուրքական պաշտոնական տեսակետներին:<sup>3</sup> Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման և արտաքին տնտեսական կապերի հաստատման ու ամրապնդման գործընթացներին են անդրադարձել թուրք հեղինակներ Ջ Բալքըրը, Ս. Չիֆթչիօլուն, Հ. Աբդերը, Օ. Օքյարը, Ս. Գյուրսելը և այլք:<sup>4</sup>

Թուրքիայի հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքագիտական առանձին ասպեկտներին ու խնդիրներին անդրադարձել են նաև քաղաքափիլ արևմտյան հեղինակներ, որոնց աշխատություններն ուղազուրկ են հատկապես խորհրդային հեղինակների մույնաման խնդիրները լուսարանող ուսումնասիրությունների հետ համադրելու տեսանկյունից: Որպես կանոն, արևմտյան հեղինակներից շատերը օգալյան բարեփոխումները դիտարկում են որպես արևմտյան արժեքների, մասնավորապես շուկայական տնտեսավարման և ներկայացուցչական ժողովրդավարության հաջող և ընդօրինակելի դեպք, անտեսելով այդ քաղաքականության իրականացման ընթացքում երևան

<sup>3</sup> ДЖИЛЛОВ Х., Экономика Турции, М., 1971, Avcioğlu Doğan, Türkiye'nin düzeni (düin-bügun-yarın), ikinci kitap, İstanbul, 1976, Çağlar Keyder, State and Class in Turkey. A Study in Capitalist Development, London-N.Y., 1987.

<sup>4</sup> Canan Balkir, Trade Strategy in the 1980s, in "The Political and Socioeconomic Transformation of Turkey", Edited by Atila Eralp, Muharrem Tunay and Birol Yeşilada, Westport, 1993, Sehran Ciftçioğlu, Financial Liberalization without Fiscal Liberalization: The Roots of the Recent Crisis in Turkish Economy // Cahiers d'etudes sur la Méditerranée orientale et le monde turco-iranien, no. 19, janvier-juin 1995, Halis Akder, Turkey's Export Expansion in the Middle East, 1980-1985, "The Middle East Journal", vol. 41., no. 4, 1987, Osman Okyar, Development Background of the Turkish Economy, 1923-1973, "International Journal of Middle East Studies", vol. 10, No. 3, 1979, Seyfettin Gürsel, Relations économiques extérieures de la Turquie (1960-1980), Deux décennies d'industrialisation en Turquie. 1960-1980. D'une stratégie à l'autre, Cahiers du GETC, Hiver 1985-1986, No.2, Paris, 1986.

եկած քաղաքափիլ հոռի հետևանքները: Թուրքիայի տնտեսության, հասարակական-քաղաքական համակարգի զարգացման և արտաքին առևտրի դինամիկայի հետազոտման հարցերին իրենց աշխատանքներում անդրադարձել են Ա. Կրյուգերը, Ջ. Վաբերբերին, Ջ. Հերշլագը, Գ. Վինրոուն, Է. Յյուրիսերը և ուրիշներ:<sup>5</sup>

Հեղինակի կողմից օգտագործվել են նաև թուրք և արևմտյան հեղինակների հոդվածներից կազմված արժեքավոր ժողովածուներ, որոնցում ներկայացված է ժամանակակից Թուրքիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման առանձին հարցերի քննությունը:<sup>6</sup>

Արևմտյան որոշ հեղինակների կողմից Թուրքիայի՝ արևմտյան նախօրինակով, սոցիալ-տնտեսական հաջող զարգացման վերաբերյալ տեսակետները հակված ենք բացատրելու այդ հեղինակների ոչ միայն խիստ մեղ մասնագիտացումով, այլև Թուրքիայի, որպես Արևմուտքի, առաջին հերթին ՆԱՏՕ-ի անդամ-պետություն լինելու հանգամանքով:

Ատենախոսության տեսական խնդիրների քննության առումով մեծապես օգտակար են եղել հայտնի հասարակագետներ ու քաղաքագետներ Ը. Այգենշտադտի, Ս. Հանթինգթոնի և Ա. Պշտրսկու ուսումնասիրությունները, որոնցում արժեքավոր դատողություններ ու վերլուծություններ են արվում տնտեսության անցումնային շրջանի առանձնահատկությունների, շուկայական հարաբերությունների և ժողովրդավարական գործընթացների փոխհարաբերությունների վերաբերյալ:<sup>7</sup>

Լայնորեն օգտագործվել են հայերեն, ռուսերեն, թուրքերեն և անգլերեն լեզուներով մամուլի ու գիտական պարբերականների հարուստ նյութերը:

<sup>5</sup> Anne O. Krueger and Onan H. Aktan, Turkey: Trade Reforms in the 1980s "ICS Press", San Francisco, 1992, Allan Richard, John Waterbury, Political Economy of the Middle East, Oxford, 1990, John Waterbury, The Political Context of Public Sector Reform and Privatization in Egypt, India, Mexico and Turkey, in "The Political Economy of Public Sector Reforms and Privatization", edited by Ezra N. Suleyman and John Waterbury, Boulder-San Francisco-Oxford, 1990, Hershlag Z. Y., Turkey-The Challenge of Growth. "Brill", Leiden, 1968, Hershlag Z. Y., The Economic Structure of the Middle East, "E. J. Brill", Leiden, 1975, Gareth M. Winrow, Turkey and the Former Soviet South, "Royal Institute of International Affairs", London, 1995, Eric Zürcher, Modern Turkey, London, 1995.

<sup>6</sup> The Political and Socioeconomic Transformation of Turkey. Edited by Atila Eralp, Muharrem Tunay and Birol Yeşilada, Westport, 1993, The Economy of Turkey Since Liberalization. Ed. by S. Toğan and V. N. Balasubramanyam, London, 1996, Political Modernization in Japan and Turkey, edited by Robert E. Ward and Dankwart A. Rustow, Princeton-New Jersey, 1968.

<sup>7</sup> Айзенштадт С., Революции и трансформация обществ, М., 1999, Samuel P. Huntington, The Third Wave. Democratization in the Late Twentieth Century", Norman and London, 1991, Adam Przeworski Democracy and the Market. Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America, "Cambridge University Press", Cambridge-New York, 1991.

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմք են ծառայել պատմա-համեմատական, պատմավերլուծական քննության և միջդիսցիպլինար հետազոտության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել քաղաքական և տնտեսական հարցադրումները մեկ ամբողջական համակարգում: Հեղինակի կողմից օգտագործվել են պատմության և հասարակագիտության մեջ ընդունված հայեցակետերը:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Տեսական առումով այն կարևորվում է Թուրքիայի նորագույն պատմաշրջանում արդիականացման գործընթացների ընթացքի և առանձնահատկությունների քննությամբ:

Ատենախոսության թեման և դրա շուրջ արված եզրահանգումներն ու մեկնաբանությունները հնարավորինս օգտակար կարող են լինել պատկերացում կազմելու և ճիշտ հասկանալու ժամանակակից Թուրքիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքը, տնտեսության ներկա վիճակը, ներքաղաքական գործընթացները, ինչպես նաև արտաքին քաղաքականության առաջնությունները և դրանց տրամաբանությունը:

Աշխատանքը կարևորվում է նաև Թուրքիայի պատմության և տնտեսական զարգացման առանձնահատկությունների լուսաբանման, ինչպես նաև դրա յուրահատկության խոր ընկալման առումներով: Այս փոփոխությունների զարգացման ընթացքի քննությունը թույլ կտա ճիշտ հասկանալու մերձավորարևելյան, կենտրոնասիական, ինչպես նաև հարակից մյուս տարածաշրջաններում Թուրքիայի ունեցած դերի կարևորման պատճառներն ու հետևանքները:

Գործնական առումով թեման կարևոր է Թուրքիայի, որպես Հայաստանի հանրապետության արևմտյան մեծ հարևանի հետ քաղաքական և տնտեսական կապեր հաստատելու, արտաքին քաղաքական հայեցակարգի մշակման, ինչպես նաև տնտեսական բարեփոխումների թուրքական փորձի Հայաստանում կիրառելու տեսանկյուններից: Աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել Թուրքիայի հանրապետության նորագույն պատմության դասընթացը շարադրելիս:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները հրապարակվել են հեղինակի մի շարք գիտական աշխատություններում:

Հեղինակի հրատարակած բեզերի ու հոդվածների ցանկն առանձին ներկայացված է սեղմագրի վերջում:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ, որը կրում է «Թուրքիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը XX դարի 60-70-ական թթ. և տնտեսական բարեփոխումների առաջին փուլը (1980-1983թթ.)» խտրագիրը, նվիրված է XX դարի 60-70 թթ. Թուրքիայի տնտեսության մեջ և ներքաղաքական դաշտում տեղի ունեցած զարգացումներին, դրանց հետ կապված էական խնդիրներին և հարցադրումներին, 1980թ. սեպտեմբերի 12-ին զինվորական հեղաշրջման սոցիալ-տնտեսական և քաղաքական մախադրյալներին, 1982թ. սահմանադրության սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերվող հոդվածների ուսումնասիրությանը, ինչպես նաև 1980-83թթ. Թուրքիայում կառավարած զինվորական իշխանությունների սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձնահատկություններին և արդյունքներին:

Առաջին ենթաբաժնում տրվում է հանրապետական Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման պատմության համառոտ պարբերացումը, բաժանելով այն հինգ հիմնական փուլերի: Անդրադարձ է կատարվում յուրաքանչյուր փուլի էական և որոշիչ հատկանիշներին՝ ներկայացնելով դրանք հանրապետության սկզբնավորումից մինչև XX դարի 90-ական թվականների առաջին կեսերը: Այս գլխում բացատրվում է «էտատիզմ» եզրի էությունը, տրվում են դրա դրսևորման յուրահատկությունները թուրքական իրականության մեջ: Էտատիզմը հանդիսացել է Քեմալ Աբաթուրքի նախանշած տնտեսական քաղաքականության հիմնական

սկզբունքներից մեկը և հաջորդ ժամանակավուրեքում դրա մասնակի վերանայումը դիտվել է որպես Թուրքիայում շուկայական տնտեսության ներդրման կարևոր նախապայման: Դեմոկրատական կուսակցության (ԴԿ) կառավարողների շուկայական տնտեսավարման կիրառմանն ուղղված ջանքերը թերի էին, քանզի դրանք մեծապես ստորադաս մնացին պետության և պետական մասնաբաժնի ունեցած գերիշխող դերի նկատմամբ: 60-70-ական թթ. թուրքական տնտեսության բնորոշ հատկանիշը հանդիսացավ «խառը տնտեսությունը», որն առաջին հերթին նշանակում էր պետական և մասնավոր սեկտորների համակեցություն: XX դարի 80-ականներին նոր ժամանակաշրջան է սկսվում Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, որը նշանավորվեց շուկայական բարեփոխումների իրականացմամբ և շուկայական հարաբերությունների հետագա խորացմամբ, որոնք հիմնված լինելով 1980թ. հունվարի 24-ին *Միջազգային արժույթային հիմնադրամի* (ՄԱՀ) կողմից առաջադրված կայունացման ծրագրի վրա, նշանակալից ազդեցություն ունեցան թուրքական տնտեսության զարգացման գործում:

Երկրորդ ենթաբաժնում քննարկման հիմնական խնդիրներ են Թուրքիայում XX դարի 60-70-ական թթ. հասարակական-քաղաքական կացությունը, անցումը բազմակուսակցական համակարգին և 1960, 1971թթ. զինվորական հեղաշրջումների նախադրյալները:

ԴԿ-ի իշխանության գալը ազդարարեց Ժողովրդահանրապետական կուսակցության (ԺՀԿ) մենիշխան կառավարման ավարտը, սակայն առաջինի կառավարման տասնամյակը, ըստ էության, նոր միակուսակցական վարչակարգի հաստատման փորձ հանդիսացավ: ԴԿ-ի իշխանության գալը որակական նոր քայլ էր թուրքական պատմության մեջ: Առաջին անգամ ընտրազանգվածն արտահայտեց իր քաղաքական ընտրությունը և քվեարկեց հարյուրամյակների ավանդույթ ունեցող էտատիստական համակարգի դեմ: Անցումը ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի պայմանավորվեց Թուրքիայի քաղաքական կյանքում էտատիստական տնտեսավարումից հեռացած մի խումբ անկախ խոշոր ձեռնարկատերերի հանդես գալով, ինչպես նաև արտաքին մի քանի վճռորոշ գործոններով: Վերջիններիս թվում առաջնային էր Աբնուտքի հետ հարաբերությունների հետագա զարգացումն ու եվրոպական կառույցներին անդամագրվելը:

ԴԿ-ի ավտորիտար վարչակարգը, ձգտելով չեզոքացնել ընդդիմադիր կուսակցությունների մասնակցությամբ ընտրական խմբավորման ստեղծումը, փաստորեն ներքաղաքական լարվածության սրման և 1960թ. մայիսի 27-ի զինվորական հեղաշրջման պատճառը դարձավ: Հեղաշրջումը հանրապետական Թուրքիայի պատմության մեջ հանդիսանալով անմասնադեպ երևույթ, ակնհայտ դարձրեց երկրի ներսում

զինվորականության, որպես Աթաթուրքի գաղափարների և վերափոխումների պաշտպանի ու երաշխավորի դերը:

Քաղաքացիական իշխանության վերականգնումից հետո Թուրքիայի ներքաղաքական ոլորտում գործում էին մեկ տասնյակից ավելի քաղաքական կուսակցություններ և չնայած էտատերազամյան շրջանում թուրքական «մայր» կուսակցության՝ ԺՀԿ-ի հեղինակության անկմանը, երկրի ներքաղաքական պայքարի հիմնական ընթացքը որոշվում էր երկու առավել ազդեցիկ կուսակցությունների՝ ԺՀԿ-ի և Արդարություն կուսակցության (ԱԿ) մրցակցությամբ: Այս փուլում Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղ գտած կարևոր իրադարձություններից էր հասարակական մասնավորապես արհմիութենական, կրոնական և մշակութային կազմակերպությունների բուռն ձևավորումը: Մյուս կարևոր երևույթը ձախ հոսանքների ու շարժումների երևան գալն էր, ինչը լրացուցիչ լարվածություն հաղորդեց Թուրքիայի ներքաղաքական պայքարին:

70-ականների սկզբներին երկրի ներսում լարվածության սրումը նոր քափ ընդունեց, ինչը զգալի ազդեցություն թողեց տնտեսական ցուցանիշների վրա: Այս զարգացումներին ուշի ուշով հետևող բանակի ավագ սպայակազմը հերթական անգամ, բայց ոչ ուղղակիորեն ներխուժում կատարեց քաղաքականության ոլորտ, ինչը դրսևորվեց 1971թ. մարտի 12-ի հուշագրով, հանգեցնելով Ս. Դեմիրելի կառավարության անկմանը: Ի տարբերություն 1960թ. զինվորական հեղաշրջման, այս անգամ զինվորականությունը անմիջապես չգրավեց իշխանությունը, այլ հանդես եկավ խորհրդարանական վարչակարգի պահպանման շրջանակներում «վերկուսակցական» կառավարություն կազմելու նախաձեռնությամբ՝ անկուսակցական վարչապետի գլխավորությամբ: Ո՛չ վերկուսակցական և ո՛չ էլ Բ. Էջևիթի և Ս. Դեմիրելի իրար հաջորդած կառավարությունները չկարողացան լուծել Թուրքիայի առջև ծառայած սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ խնդիրները, ինչի պատճառով ճգնաժամային իրավիճակ ստեղծվեց թուրքական պետության հասարակական քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում: Որպես հետևանք այս զարգացումների, թուրքական բանակը 1980թ. սեպտեմբերի 12-ին հերթական, թվով երրորդ անգամ գրավեց իշխանությունը, նպատակ ունենալով կասեցնել ներքաղաքական քառույթ և անհրաժեշտ պայմաններ ստեղծել պետության հետագա գոյության ու տնտեսության գործառնությունն ապահովելու համար:

Երրորդ ենթաբաժնում հետազոտվում են XX դարի 60-70-ական թվականների Թուրքիայում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը, կապիտալիստական հարաբերությունների հետագա խորացման և արդյունաբերականացման գործընթացները, ինչպես նաև «խառը տնտեսության» պայմաններում թուրքական տնտեսության զարգացման միտումները:

ԴԿ-ի կառավարման տասնամյակը (1950-1960թթ.) որակական նոր ժամանակաշրջան հանդիսացավ Թուրքիայի տնտեսական զարգացման համար: Նոր կառավարության իրականացրած մասնակի ազատականացման և մասնավոր սեկտորի խրախուսմանն ուղղված քաղաքականությունը արտահայտվեց 1950-53թթ. գրանցված տնտեսական աճով և առևտրատնտեսական հարաբերությունների աշխուժացմամբ: Թուրքիայի Հանրապետության կազմավորումից հետո, երկրի արդյունաբերությունն արագ զարգացնելու խնդիրը մեծ հրատապություն ձեռք բերեց: Երկրի արդյունաբերական համալիրը ոչ միայն թույլ էր, այլև առավելապես ուղղված էր հիմնականում գյուղատնտեսական հումքի վերամշակմանը: Ելնելով այս հանգամանքից, թուրքական կառավարողների հիմնական ուշադրությունը կենտրոնացավ երկրի ներքին պահանջարկը բավարարելու խնդրին, ինչպես նաև արտահանմանն ուղղված արդյունաբերական ճյուղերի զարգացմանը:

1960թ. հեղաշրջումից հետո որոշակի աշխուժացում նկատվեց տնտեսության մեջ, ինչը հետևանք էր տնտեսության ոլորտում պետության դերի բարձրացման և նոր, պլանային զարգացման ռազմավարության կիրառման: Թուրքական տնտեսության արդյունաբերականացումը դարձավ իշխանությունների կարևորագույն տնտեսական նպատակը: Այն կոչված էր լուծելու Թուրքիայի առջև ծառայած մի շարք հրատապ լուծում պահանջող հարցեր: Առաջնահերթ կարևորություն տրվեց տնտեսության բազմաճյուղայնացմանը (դիվերսիֆիկացիա), այսինքն տնտեսության ճյուղային կառուցվածքում արմատական փոփոխությունների իրականացմանը և նոր արդյունաբերական ճյուղերի ստեղծմանը: Բազմաճյուղայնացման կարևորագույն խնդիրներից էր նաև ազգային վերարտադրողական գործընթացի բույլատրելի սահմանները գերազանցող կախվածության վերացումը արտաքին գործոններից և աշխատանքի արտադրողականության բարձրացումը: 1961թ. ստեղծվեց *Պետական պլանային կազմակերպությունը*, իսկ 1963թ. հունվարի 1-ից թուրքական տնտեսությունն անցավ զարգացման առաջին հնգամյա պլանի կատարմանը (1963-67թթ.):

Քաղաքական կուսակցությունների միջև պայքարի արդյունքում ձևավորված կառավարություններն իրենց կնիքն էին թողնում տնտեսության հետագա զարգացման վրա: ԴԿ-ի գաղափարական իրավահաջորդը հանդիսացող ԱԿ-ն որդեգրեց տնտեսության ոլորտում իր նախորդի քաղաքականությունը: ԱԿ-ի ծրագիրը պարունակում էր ազատական տնտեսական համակարգը սատարող միջոցառումներ, որոնք առաջին հերթին ընդլայնելու էին մասնավոր ձեռնարկատիրության իրավասությունները և սահմանափակում էին պետության տնտեսական գործառնությունները:

Այս փուլում արդյունաբերականացմանը համընթաց տեղի ունեցավ գյուղատնտեսության ոլորտում արդիականացման գործընթացների հետագա խորացում, որը դրսևորվեց աշխատանքի մեքենայացմամբ և նորագույն տեխնոլոգիաների օգտագործմամբ: Մակայն ագրարային բարեփոխումների թերի իրականացումը մեծապես արգելակում էր գյուղատնտեսության հետագա զարգացումը: Պետության չթուլացող ազդեցիկ դերը տնտեսության ոլորտում, դրսևորվելով «խառը տնտեսության» ռազմավարության համատեքստում, 70-ականների վերջին հանգեցրեց համընդհանուր ներքին տնտեսական ճգնաժամի: Այս շրջանում լրացուցիչ լարվածության աղբյուր հանդիսացավ ազգային եկամտի ոչ հավասարաչափ բաշխումը, գործազրկության աճը, ազգային տարադրամի մշտական բնույթ ստացած արժեզրկումը, հողագուրկ և սակավահող գյուղացիության զանգվածային տեղաշարժը քաղաքներ և վերջիններիս գերբնակեցումը, ինչպես նաև արտաքին պարտքի անմախաղեպ աճը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Ս. Գեմիլբելի կառավարությունն ստիպված էր 1980թ. հունվարին ընդունելու ՄԱՀ-ի կողմից պարտադրված կայունացման ծրագիրը, որի իրագործումը, սակայն անհնար դարձավ ներքաղաքական լարվածության և ապակայունության պատճառով: Հիշյալ ծրագրի արդյունավետ կենսագործումն երաշխավորելու և երկրի ներսում կայունություն ապահովելու համար թուրքական բանակն իր ձեռքը վերցրեց իշխանության բոլոր լծակները, իր առջև խնդիր դնելով կասեցնել տնտեսության անկումը և ապահովել կայուն զարգացումը:

XX դարի 80-90-ական թթ. իրականացված շուկայական բարեփոխումների առաջին փուլն իրագործվեց 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո Թուրքիայում հաստատված զինվորական իշխանության օրոք (1980-1983թթ.), որի ուսումնասիրությանն է նվիրված առաջին գլխի չորրորդ ենթաբաժինը: Այս հեղաշրջումն ի տարբերություն նախորդների, ավելի արմատական նախաձեռնություն էր, որի հիմնական նպատակն էր վերափոխել պետական սահմանադրական կառույցները, ժողովրդի մոտ արմատացած քաղաքական դիրքորոշումը և ապաքաղաքականացնել ողջ հասարակությունը՝ կանխելով ապագայում հնարավոր քաղաքական և գաղափարախոսական հատվածայնությունը և բևեռացումը: Տնտեսության կայունացումը դարձավ զինվորական կառավարության հիմնական առաջնայնություններից մեկը: Ջինվորական ընտրախավը փորձեց իր ազդեցությունը տարածել Թուրքիայի տնտեսական կյանքի բոլոր ոլորտների վրա: Նոր իշխանությունների ֆինանսատնտեսական քաղաքականությունը հանգում էր հետևյալ հրատապ միջոցառումների իրականացմանը՝ հավասարակշռված բյուջետային քաղաքականություն, թրթադրամի էմիսիայի կրճատում, պետական ծախսերի կարգավորում և արտաքին առևտրի ծավալի մեծացում:



Հեղաշրջումից հետո Բ. Ուլուստի կառավարության կազմում Թուրգոթ Օզալի նշանակումը վարչապետի տեղակալի և պետնախարարի պաշտոններում վկայեց այն մասին, որ տնտեսական բարեփոխումների հարցում զինվորական իշխանությունները հետամուտ են «Հունվարի 24-ի» կայունացման ծրագրի գործնական իրականացմանը, նպատակ ունենալով թուրքական տնտեսությունը կողմնորոշել դեպի շուկայական տնտեսավարումը՝ հիմնված մասնավոր ձեռնարկատիրության վրա: «Հունվարի 24-ի» կայունացման ծրագրի հիմնական գաղափարը ազգային արդյունաբերության և տնտեսության վերարտադրության մեխանիզմի կատարելագործումն էր՝ հիմնված արտադրության և կապիտալի կուտակման ու կենտրոնացման վրա: Այն նպատակ ուներ բարձրացնել ազգային արտադրանքի մրցունակությունը, ապահովելով անցումը ներմուծման փոխարինման քաղաքականությունից արտահանման ուղղված արդյունաբերականացմանը:

Տնտեսության ոլորտում ընդունված որոշումներն ու դրանց կիրառումը իրականացվում էին բանակի ամբողջական և անառարկելի վերահսկողության պայմաններում, ինչը նշանակալից չափով ապահովում էր դրանց հաջող կենսագործումը: Ընդհանուր առմամբ, մասնավոր կապիտալը զինվորական վարչակարգի ձեռնարկած միջոցառումների արդյունքում լրացուցիչ հնարավորություններ ստացավ արտադրության խորացման և կենտրոնացման գործընթացի արագացման, ինչպես նաև կապիտալիստական վերարտադրության համար խոշոր միջոցների մոբիլիզացիայի առումով:

Իր որոշիչ մասնակցությունն ունենալով «Հունվարի 24-ի» ծրագրի կազմման գործում, Թուրգոթ Օզալը դարձավ թուրքական տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների հետագա ներդրման ջատագովը, արևմտյան մամուլում որակվելով որպես «թուրքական նոր տնտեսության ճարտարապետ»:

Գլխի վերջին, հինգերորդ ենթաբաժնում լուսարանվում է Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի արտացոլումը 1982թ. ընդունված նոր սահմանադրության մեջ: Բարձրաստիճան զինվորականության կողմից սահմանադրական օրենսդրական նախաձեռնության հերթական օրինակը վերստին փաստեց Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում բանակի ունեցած ծանրակշիռ դերի և ազդեցության մասին: Նոր սահմանադրությունը՝ ի համեմատություն նախորդի, զգալիորեն կրճատում էր ժողովրդավարական ազատություններն ու իրավունքները՝ կտրուկ կերպով բարձրացնելով պետության հեղինակությունը և ուժեղացնելով գործադիր իշխանության դիրքերը: Նոր սահմանադրությամբ հաստատվում էր պետության միջամտությունը տնտեսության մեջ, ինչպես դրամական միջոցների կուտակման ու ներդրման առումով, այնպես էլ ելնելով ազգային աղբյուրների արտադրողական օգտագործումն ապահովելու և զների կայունացման

ու վճարողական հաշվեկշռի ամրապնդման համար պայմաններ ստեղծելու նպատակներից: Նոր սահմանադրությունը մշակվելով և ընդունվելով զինվորականության աշակերտ հսկողության ներքո, շատ դեպքերում հակադրվում էր շուկայական բարեփոխումների ոգուն և բովանդակությանը: Հանդես գալով քեմալիզմի, մասնավորապես երկրի տնտեսական կյանքում պետության դերի ուժեղացման օգտին, զինվորականությունը փաստորեն այս սահմանադրությունը վերածեց զսպիչ գործոնի նախատեսվող լիակատար շուկայական բարեփոխումների, ազատականացման ու անհատ ձեռներեցության խրախուսման ոլորտներում:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ Գ-ԼՈՒՆԵԼ՝ «Սոցիալ-տնտեսական բարեփոխումների երկրորդ փուլը (1983-1993թթ.)», անդրադառնում է քաղաքացիական իշխանության վերականգնումից հետո Թուրքիայի հետագա տնտեսական ռազմավարության շուրջ ձևավորված քաղաքական պայքարին, շուկայական բարեփոխումների իրականացման երկրորդ փուլի ընթացքին և թուրքական կառավարողների կողմից տնտեսապես հետամնաց արևելյան վիլայեթներում կիրառած քաղաքականության առանձնահատկություններին:

Առաջին ենթագլխում տրվում է քաղաքացիական իշխանությանն անցնելուց հետո Թուրքիայի տնտեսական զարգացման նոր ռազմավարության շուրջ ձևավորված քաղաքական պայքարի ընթացքը: 1983թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար կազմավորվեցին մի շարք քաղաքական կուսակցություններ, որոնց մի մասը հետապնդում էր սկզբունքորեն տարբեր տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման ռազմավարություններ: Այս ընտրություններում՝ հաղթած «Մայր Հայրենիք» (ՄՀ) կուսակցությունն իշխանության եկավ որպես շուկայական տնտեսության կողմնակից, մերժելով կենտրոնացված պլանավորումը և դրա հետևանքով կազմակերպությունների ու մասնավոր անձանց ձեռնարկատիրական նախաձեռնությունների սահմանափակումը: Ընտրություններում ստանալով ձայների 45,2 %-ը, ՄՀ-ն կազմեց միակուսակցական կառավարություն Թուրգոթ Օզալի գլխավորությամբ:

Նոր կառավարության ծրագիրն իր հիմնական մասով բխում էր ՄՀ կուսակցության սկզբունքներից: Առաջին հերթին այն արտահայտում էր «Հունվարի 24-ի» տնտեսական բարեփոխումների ռազմավարության նկատմամբ ունեցած հավատարմությունը:

Տնտեսական զարգացման և առաջընթացի հիմնական խնդիրները նոր կառավարության ծրագրում համարվում էին արդյունաբերության հետագա կատարելագործումը, արտահանման անհատ ձեռներեցության խրախուսումը և շուկայական հարաբերությունների հետագա խորացումը:

Շուկայական բարեփոխումների կոշտ և շատ հաճախ անհավասարակշիռ քաղաքականությունը, սոցիալական ապահովության ոլորտում սահմանափակումների կիրառումը, իրական աշխատավարձի կրճատումը, համատարած քանկացումը և գործազրկության անը պատճառ հանդիսացան Թուրքիա Երկրի կառավարության և ՄՀ կուսակցության հեղինակության անկման համար, ինչը բացասական հետևանք ունեցավ կուսակցության համար հաջորդած խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Երկրորդ ենթաբաժնում վերլուծության են ենթարկվում քաղաքացիական իշխանությանն անցնելուց հետո Թ. Օզալի կառավարության իրագործած տնտեսական բարեփոխումների ընթացքը և արդյունքները:

Նոր կառավարության գործունեության կարևոր ոլորտներից էր թուրքական արդյունաբերական համալիրի հետագա կատարելագործումը, որը կխրախուսեր Թուրքիայում արտադրվող արդյունաբերական ապրանքների արտահանումը միջազգային շուկաներ, միաժամանակ ապահովելով դրանց մրցունակությունը: Չնայած Թ. Օզալի կառավարությունը հանդես եկավ ազատականացման կարգախոսներով, տնտեսության զարգացման պլանավորումը շարունակեց մնալ որպես թուրքական տնտեսության կազմակերպման կարևոր ռազմավարություն: Չարգացման հինգերորդ պլանով (1985-1989թթ.) նախատեսվում էր կրճատել պետական ծախսերը, խորացնել թուրքական և համաշխարհային տնտեսական համակարգերի հետագա սերտաճման գործընթացը: Ուշադրության կենտրոնում հայտնվեց *Պետական տնտեսական կազմակերպությունների* (ՊՏԿ) ապամենաշնորհման և հողային բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

ՊՏԿ-ները դարձան սեփականաշնորհման գործընթացի հիմնական թիրախը: Ընդհանուր առմամբ Թուրքիայում այս ընթացքում համատարած սեփականաշնորհման միտումներ չգրանցվեցին: Դա առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ մասնավոր կապիտալը նախ ձգտում էր ձեռք բերել արագ և բարձր եկամուտ ապահովող ձեռնարկություններ կամ ստեղծել նորերը:

Տնտեսական բարեփոխումների կենսագործման համար խիստ անհրաժեշտ արտասահմանյան դրամագլխի և ներդրումների հոսքն ապահովելու համար կարևոր նշանակություն ունեցավ «Ազատ առևտրական գոտիների» մասին ընդունված օրենքը: Արտասահմանյան ներդրողներին թուրքական շուկաներ էր գրավում Էժան և որակյալ աշխատուժը, ներդրումների համար հատուկ գոտիների և բարենպաստ օրենսդրական դաշտի առկայությունը:

1984թ. աշնանը կառավարության ագրարային բարեփոխումներ անցկացնելու մասին ընդունած օրենքը թեև զգալի առաջընթաց էր գյուղատնտեսական ոլորտում շուկայական

հարաբերությունների ներդրման տեսանկյունից, այդուհանդերձ այն լուծում չտվեց այս ոլորտում տեղ գտած խնդիրներին: Սոցիալական ոլորտում թուրքական կառավարողները հաջողությամբ կարողացան օգտագործել արտաբյուջետային հիմնադրամների միջոցները, դրանք ուղղելով բնակարանային շինարարության և սոցիալապես անապահով խավերին պաշտպանելու ոլորտները:

Պետք է փաստել, որ Թ. Օզալի ձեռնարկած և իր նախադեպը չունեցած տնտեսության ազատականացման բարեփոխումները, ի թիվս զգալի դրական արդյունքների, ունենալով շոշափելի բացթողումներ և թերացումներ, հատկապես, ֆինանսական և հարկային քաղաքականության ոլորտներում, չկարողացան կրճատել գործազրկության, լիբայի արժեզրկման և արտաքին պարտքի չափերը:

Նույն զվտի երրորդ ենթագլխով նվիրված է Թուրքիայի արևելյան տնտեսապես հետամնաց վիլայեթներում թուրքական տնտեսական քաղաքականության առանձնահատկությունների քննությանը: Թուրքիայի հետամնաց այս տարածաշրջանը, կազմելով պետության տարածքի մեկ երրորդից ավելին, շարունակում էր դուրս մնալ Թուրքիայի տնտեսական համակարգում տեղի ունեցող սերտաճման գործընթացներից: Բազմակուսակցական քաղաքական համակարգին անցնելուց հետո այս տարածաշրջանի տնտեսական զարգացման խնդիրը դարձավ զանազան քաղաքական շահարկումների առարկա, հատկապես նախընտրական քարոզարշավների և կառավարական ծրագրերի կազմման ժամանակ:

Օզալի կառավարությունը՝ ի թիվս այլ հրատապ լուծում պահանջող խնդիրների, իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև այս շրջանների զարգացման հարցերի վրա, որոնք ոչ միայն գուտ տնտեսական, այլև կարևոր սոցիալ-քաղաքական խնդիր էին դարձել: Թուրքական իրականության մեջ առաջին անգամ պետական նախարարներից մեկին հանձնարարվեց այս վիլայեթների զարգացման վարույթը:

«Հետամնաց արևելքի» շուտափույթ զարգացման համար մեծ կարևորություն ունի «Հարավ-արևելյան անատոլիական նախագիծը» (ՀԱԱՆ). որը ներառում է այս տարածաշրջանում արդյունաբերության, տրանսպորտի, հանքահանության, հեռուստահաղորդակցության, առողջապահության, կրթության, զբոսաշրջիկության և ենթակառույցների զարգացման ծրագրեր:

Մոտ ապագայում ՀԱԱՆ-ի վերջնական իրականացումով Թուրքիայի հետամնաց վիլայեթների զարգացումը կքակոխի նոր փուլ, արձանագրելով երկրի այս հատվածում սոցիալ-տնտեսական զարգացման որոշակի բարելավում:

Ատենախոսության ԵՐԲՈՐԳ՝ «Բարեփոխումների իրականացումն արտաքին առևտրի ոլորտում և արտաքին տնտեսական կապերի ընդլայնումը 80-90-ական թթ.» գլուխն անդրադառնում է օգալյան տնտեսական բարեփոխումների համատեքստում արտաքին առևտրի ոլորտում իրականացված միջոցառումներին և մերձավորարևելյան ու կենտրոնասիական տարածաշրջանների երկրների հետ արտաքին տնտեսական կապերի զարգացմանը և հաստատմանը:

Գլխի առաջին ենթաբաժնում վերլուծման են ենթարկվում արտաքին առևտրի ոլորտում իրականացված ազատականացման քայլերը, դրանց ունեցած դրական արդյունքները և բացթողումները: Արտաքին առևտուրը հանդիսանալով երկրի տնտեսությունն արտաբժույթով ապահովող հիմնական ոլորտը, միաժամանակ հանդիսանում է Թուրքիայի տնտեսական համակարգի կարևորագույն օղակներից մեկը:

80-ականների բարեփոխումների իրականացման ծրագրում կարևորվեց արտաքին առևտրի ռեժիմի ազատականացման և արտահանման խրախուսման քաղաքականության անհրաժեշտությունը: Կարևոր է ընդգծել, որ պետության դերն առևտրի ազատականացման դեպքում լիովին չանհետացավ, այլ կրեց որոշակի ձևափոխում՝ ներմուծման սահմանափակման վերահսկումից դեպի արտահանման համընդհանուր խրախուսումը:

1979-1989թթ. Թուրքիայի արտաքին առևտրի ծավալն աճեց 3,7 անգամ, իսկ արտաքին առևտրի մասնաբաժինը երկրի ՀԱԱ-ի կազմում 13 տոկոսից հասավ 34-ի: Կրկնապատկվեց նաև Թուրքիայի՝ համաշխարհային առևտրում, ունեցած տեսակարար կշիռը: Սակայն պետք է ընդգծել, որ շատ հաճախ իշխանությունների՝ այս ոլորտում կիրառած միջոցառումները կրում էին հապճեպ և շուկային բնույթ: Վարկային արտոնությունների անհասանելիությունը, արտադրանքի արհեստական տեղափոխումը ներքին շուկայից դեպի արտաքինը, արտահանման խրախուսումն ազգային տարադրամի չընդհատվող արժեզրկման պայմաններում լուրջ խոչընդոտներ էին հարուցում այս ոլորտում գրանցված հաջողությունների հետագա զարգացման համար:

Երկրորդ ենթաբաժնում հետազոտվում են Սերժավոր և Միջին Արևելքի երկրների հետ առևտրատնտեսական կապերի հետագա զարգացման գործընթացը և հիմնական ոլորտները: 80-ական թթ. թուրքական տնտեսության ազատականացման գործընթացները, արտադրվող ապրանքների համար նոր շուկաների յուրացման անհրաժեշտությունը, ինչպես նաև երկրի ներսում բնակչության աճի հետևանքով գործազրկության աճի տեմպերը մեղմելու ցանկությունը օբյեկտիվ այն պատճառներն էին, որոնք նպաստեցին մերձավորարևելյան տարածաշրջանի երկրների հետ առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը: Իրան-իրաքյան հակամարտության ժամանակ (1980-1988թթ.) պատերազմող երկու կողմերի հետ

ընդհանուր սահմանի առկայությունը նպաստեց, որպեսզի այս երկու երկրները դառնային Թուրքիայի արտաքին առևտրական հիմնական գործընկերները: Թուրքական կապիտալը և կապալային ընկերությունները լայնորեն ներթափանցեցին Լիբիայի, Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի և տարածաշրջանի մյուս երկրների շուկաներ՝ ապահովելով զգալի եկամուտ: Թուրքական կողմի հիմնական մտահոգություններից էր այս երկրներից նավթի անխափան մատակարարումը, որի ոչ բավարար չափերը կարող էին կաթվածահար անել երկրի տնտեսությունը: Մեծ կարևորություն տրվեց նաև իսլամական բանկերի դրամազլխի ներգրավմանը թուրքական շուկաներ: Այս տարածաշրջանի երկրների հետ շահավետ առևտրատնտեսական կապերի հաստատման ընթացքում իսլամական համերաշխության գաղափարների շահարկումը բոլորովին էլ չիսանգարեց, որպեսզի համանման փոխշահավետ կապեր հաստատվեն նաև Իսրայելի հետ՝ բարձրացնելով դրանք մինչև ռազմավարական համագործակցության մակարդակի:

Գլխի վերջին՝ երրորդ ենթաբաժնում ներկայացվում էին ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների ու Ադրբեջանի միջև առևտրատնտեսական կապերի հաստատման ընթացքը և հիմնական ոլորտները: 90-ականների սկզբներին, օգտվելով ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրությունից, Անկարան ակտիվ արտաքին քաղաքականություն սկսեց վարել Թուրքիային հարակից տարածաշրջաններում, հատկապես կարևորելով «արտաքին թյուրքերի» հետ քաղաքական և տնտեսական սերտ հարաբերությունների հաստատումը: Հանդես գալով թյուրքական համերաշխության կարգախոսերով, թուրքական կողմը ձգտում էր հանդես գալ նոր «ավագ եղբոր» կարգավիճակով: Թուրքիան ակտիվորեն լծվեց զարգացման «թուրքական մոդելի» նախընտրելիության գովազդմանը, որի հիմնական էությունն՝ իսլամական երկրի պարագայում, արևմտյան ժողովրդավարության, աշխարհիկության և շուկայական տնտեսության սկզբունքների համադրումն էր: Այս ընթացքում թուրքական կողմից առաջ քաշվեցին «Թյուրքական առևտրի և զարգացման բանկի» և «Թյուրքական ընդհանուր շուկայի» ստեղծման գաղափարները: Շահարկելով էթնիկ և կրոնական ընդհանրության գաղափարները, Անկարան հանդես եկավ լայնածավալ տնտեսական օգնություն ցուցաբերելու և ներդրումներ կատարելու պատրաստակամությամբ՝ մեծապես կարևորելով այս տարածաշրջանի նավթը և գազը Թուրքիայի տարածքով արտահանելու ապագա ծրագրերը:

Սակայն կարճ ժամանակում պարզ դարձավ, որ թուրքական կողմը չունի անհրաժեշտ ներուժ լայնածավալ տնտեսական ծավալման համար: Այսուհանդերձ, թուրքական կապիտալը կարողացավ որոշակի տեղ գրավել թյուրքալեզու հանրապետությունների

տնտեսություններում՝ միաժամանակ ապահովելով Թուրքիայի քաղաքական ներկայությունը այս տարածաշրջանում:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, հեղինակը տալիս է 20-րդ դարի 80-90-ական թթ. Թուրքիայում իրագործված տնտեսական բարեփոխումների ընդհանուր գնահատականը:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԵՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Թուրքիան, կենտրոնասիական հանրապետությունները և համաթուրքական առաջին զագաթաժողովը (1991-1993թթ.). «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3, 2000, էջ 171-177:
2. 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը և տնտեսական բարեփոխումների առաջին փուլը Թուրքիայում. - «Երիտասարդ արևելագետների հանրապետական 22-րդ զիտական նստաշրջան», Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 16-17:
3. Ղարաբաղյան հակամարտությունը բյուրքալեզու հանրապետությունների փոխհարաբերությունների համատեքստում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր XIX, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան 2000, էջ 46-52:
4. Առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը Թուրքիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների միջև, «Մերձավոր և Միջին Արևելքի պատմամշակութային ավանդույթները և ժամանակակից զարգացումները», (հոդվածների ժողովածու) Երևան, 2001, էջ 58-66:

ДЕМОЯН ГАЙК АНУШАВАНОВИЧ

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ РЕФОРМЫ В ТУРЦИИ В 80-90-Х ГГ. XX ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук  
по специальности 07.00.02 – “Всеобщая история”

Защита состоится 26-го ноября 2001г. по адресу: 375019, г. Ереван, просп. Маршала

Баграмяна 24г, Институт востоковедения НАН РА

#### РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению процесса социально-экономических реформ 80-90-х гг. XX века в Турции. Политика экономической либерализации и внедрения рыночных отношений, осуществленная Тургутом Озалам, существенным образом повлияла на дальнейшее развитие страны и процессы социально-экономических и политических преобразований в современной Турции. Тема работы актуальна и имеет как сугубо научное, так и прикладное значение, в частности, с точки зрения применения турецкого опыта экономических преобразований в нашей республике, а также выработки общей стратегии и подходов в налаживании двусторонних экономических и политических отношений между РА и Турцией. Интерес к данной проблеме обусловлен необходимостью изучения политических и экономических процессов в странах переходного периода, равно как для понимания аналогичных процессов, протекающих в странах бывшего союзнера и, особенно, СССР.

Диссертант ставит перед собой целью изучить процесс политической и экономической либерализации в 1980-1990-х гг в Турции и проанализировать его результаты. Выбор и постановка проблемы обусловлены тем, что социально-экономические преобразования, имевшие место в указанный период являются уникальными за весь период существования Турецкой Республики. Автор попытается обрисовать общую картину взаимодействия между традиционной идеологией кемализма и принципами рыночных реформ, предложенных Тургутом Озалам, логику трансформации роли государства в экономике страны, а также роли армии в экономическом развитии Турции и определяющей роли экономического фактора во внешней политике Турции.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. В введении обосновывается актуальность и новизна выбранной темы, дается краткий обзор использованных источников и научной литературы. В первой главе (“Социально-экономическое и политическое положение в Турции в 60-70-х гг. XX века и первый этап экономических реформ”) диссертант дает краткую периодизацию экономического развития Турции с момента образования республики, исследует социально-экономические и внутриполитические предпосылки для

проведения рыночных реформ; рассматривает статьи новой Конституции 1982 года, касающиеся социально-экономической жизни страны; анализирует роль армии в реализации первого этапа рыночных реформ, на основе программы экономической стабилизации, принятой 24 января 1980 года.

Во второй главе ("Второй этап социально-экономических реформ (1983-1994 гг.)") рассматриваются основные моменты внутриполитической борьбы вокруг выработки новой стратегии экономического развития Турции после восстановления гражданской власти и основные принципы и подходы реализации экономической стратегии правительства Тургута Озала. Отдельный параграф главы посвящен проблемам наравномерного регионального развития и политике турецких властей в восточных экономически отсталых вилайетах.

Третья глава ("Реформы в области внешней торговли и расширение внешнеторговых связей в 80-90 гг. XX века") посвящена проблемам реализации принципов свободного рынка и либерализации в области внешней торговли, являющейся основным источником валютных поступлений для развития турецкой экономики. Рассматриваются процессы расширения торгово-экономических связей Турции со странами Ближнего и Среднего Востока, а также налаживания аналогичных связей с поркоязычными республиками бывшего СССР. Автор приходит к заключению, что определенные успехи в области турецкой внешней торговли оказали существенное влияние на проведение внешней политики Турции в конце XX столетия.

В заключение приводятся основные результаты и выводы, из которых следует, что 1) в ходе реализации рыночных реформ и частичной либерализации турецкой экономики были зарегистрированы определенные качественные изменения во всех ее сферах, 2) не удалось, однако, полностью устранить определяющую роль государства в экономической деятельности, обуздать темпы инфляции национальной валюты, рост безработицы и внешних задолжностей, 3) в целом политика "тотальной модернизации" турецкой экономики и решение проблем, связанных с экономической и политической либерализацией, были реализованы лишь частично.

